№ 28 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 30 ՅՈՒԼԻՍԻ 1894 № 28

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում դրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շնահաղուլազիմ Թաղի եկեղեցական կալուածները.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղուածներ Կովկասի լրագիրներից.— Բանասիրական. Փայտակարան կամ Ղարաղաղ գաւառը.—Յայտարարութիւններ:

Շ Ա Հ Ա Բ Դ Ո Ւ Լ Ա Զ Ի Մ ԹԱՂԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

Զարմանալի է որ Թէհրանի պէս մի քաղաքում ուր ազգային կամ եկեղեցական հաստատութիւնները այն աստիճան աղքատ են, որպիսի յանցաւոր անհոգութեամբ թոյլ է տրւում որ միակ եկեղեցին, որ ունի մի քանի փոքրիկ կալուածներ, զրկուի նորանցից, շնորհիւ մի քանի խառնակիչների մեքենայութիւններին, և թէ ինչպէս վերոյիշեալ եկեղեցու կալուածները օրըստօրէ քանդւում փչանում են և նոցա հասոյթները կորչում: Ընթերցողը կը հարցնէ ինչո՞ւ.—որովհետև ոչ թաղի ծուխը, ինքը կամենում է դուրս գալ իւր թմրութիւնից և ձեռք զարկել այդ կալուածների կանոնաւորման գործին, և ոչ թոյլ է տալիս որ մի որ և իցէ այլ հաստատութիւն կատարէ այդ, դարձեալ յօգուտ իւր:

5—6 տարի առաջ այդ եկեղեցու կալուածները բերում էին մօտաւորապէս 200 թուման տարեկան հասոյթ, բայց այդ հասոյթը կամ փչանում էր, կամ շռայլաբար ծախսւում դարձեալ շինութիւնների վերայ, և միւս կողմից նոյն թաղի փոքրաթիւ ծխականները շարունակ գանգատւում էին թէ իւրեանք դրպրոց չունին, իւրեանց զաւակները անկիրթ են մնում և այլն, և բամբասում էին երիտասարդութեանը որ իւր բոլոր ուշքը դարձրել է միայն Ղազվինի թաղի ուսումնարանի վերայ և ամենափոքր ջանքը չէ ուզում անել իւրեանց թաղում ևս մի ուսումնարան շինելու: Այս գանգատը քաջալերեց մի քանի գործող անձնաւորութեանց մի փորձ անելու, կանոնաւորել այդ կալուածների հասոյթները, և նորանցով հիմնել այն թաղում մի նախակրթարան: Առաջին ժողովում որ կազմուեցաւ այդ եկեղեցու ծխականներից այդ նպատակով, սարսափելի հակառակութիւն ծագեց. գործից երևաց որ տներից մէկի մէջ նստած էր երեսփոխանը, միւսի մէջ նորա խնամին, որ իւր չքաւորութիւնը պատրուակ բերելով չէր ուզում վարձ վճարել. երրորդի մէջ նստում էր մի ծխական, որ ասում էր, ես այն ժամանակ վարձ կը վճարեմ, երբ որ ուրիշներն էլ կը վճարեն. և այսպէս, երեսփոխան և խնամի, ծխական և. ոչ ծխական իւրեանց սեպհական ապրանքն էին համարում տները, և առօք փառօք բազմել էին այնտեղ: Ի հարկէ այդ պարոնների շահը պահանջում էր չը թողնել որ յիշեալ երիտասարդների ձեռնարկը յաջողուէր և այդպէս էլ արեցին, զանազան արգելքներ յարուցանելով և ակնարկութիւններ անելով, այնպէս որ ձեռնարկողները, չու�-նենալով ոչ մի օրինական իրաւունք կառավարչութիւնը ձեռք բերելու՝ յուսահատած քաշուեցան:

Մի երկու տարուց յետոյ գալիս է Եսայի սրբազանը, որ իւր սովորական հոգածութեամբ, հետաքրքրւում է և այդ թաղի կալուածների գործով, և ուզում է վերջ դնել այդ հասոյթների շռայլման, և տեսնելով որ թաղեցի ներից շատերը անձնական շահեր ունին այդ գործի մէջ՝

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ ԿԱՄ Ղ.ԱՐԱԴԱՂ

(Շարունակութիւն)

Բնութեան այս գեղեցիկ տեսարանների միջով ես անցնում էի դէպի Ուրկիւթին գիւղը, մերթ բարձրանալով լեռան ծայրը և մերթ ցած իջնելով խոր ձորը, որ տեղից հոսում էին սառն աղբիւրակներ եւ որոնցից ես զովացնում էի զարնան տարութիւնից զոյացած իմ ծարաւը: կէս մղոն դնալուց յետ հասայ Ուրկիւթին:

Ուրկիւթինը նոյնպէս ընկած է փոքրիկ լեռան ստորոտում. մօտիցը հոսում է փոքրիկ աղբիւրը. այս գիւղի շրջակայքը փոքր ինչ տափարակ են եւ զուրկ անտառից, որովհետեւ կտրատած եւ արտ են արած. գիւղից բաւական հեռաւորութեան վերայ է անտառը, որտեղից գիւղացիք բերում են „իրանց շինութեան՝ փայտը եւ վառելիքը

Ուրկիւթինը բաղկացած է 45 տնից, որոնք պատրաստւում են երկրագործութեամբ. ունին մի անշուք եկեղեցի, իւր քահանայով, որի անունը տէր Մարտիրոս է. շատ տգէտ: Ժամասէր ժողովրդին եկեղեցի կանչելու համար փոխանակ զանգի մի փայտէ տախտակ է կախած պատից,որ տէր Մարտիրոսը երկու փայտէ մուրճով թակում է ու ժողովրդին հրաւիրում եկեղեցի: Այս գիւղն էլ նոյնպէս զուրկ է ուսումնարանից, սոքա էլ նոյն դրութեան մէջ են ինչպէս աղաղանցիք. այս տեղ էլ փոքր ինչ խօսեցայ, որ ուշ դարձնեն ուսման վերայ:

Թողնելով Ուրկիւթինը. ճանապարհուեցայ դէպի Ղշլաղ գիւղը. փոքր ինչ դիւղից հեռանալով իմ առջեւս ելան բարձր լեռներ որոնք շրջապատուած էին խիտ անտառով. անտառի միջից անցնում է մի նեղ շաւիղ. շաւիղի երկու կողմից ծառերը բարձրանալով եւ բարձրում ճիւղերը միանալով ծածկում էին ճանապարհը,՝ այնպէս որ արեւի ճառագայթները ցած թափանցել չէին կարողանում. շաւիղը մի ստորերկրեայ մութ այրի էր նմանում. ձիու վերայ նստել անկարելի էր, որովհետեւ ծառերի ճիւղերը մարդուս աչքն էին հանում. ճանապարհից շեղուիլ անկարելի էր, անտառի խտութեան պատճառաւ. մենք ոտքով պէտք է քայլէինք: Ես կարծեցի թէ ճանապարհից շեղուել ենք, բայց շուտով ապացուցուեցաւ, որ սովորական ճանապարհը հէնց այն էր: Յակարծ լսելի եղաւ մի թփթփոց, եւ մի ծայն թնդացնում էր անտառապատ լեռներն՝ու ձորերը, չը գիտէի թէ որ կողմ նայէի.ոտքի տակից ուրիշ տեղ տեսնելն անկարելի էր. շուտով իմ առջեւ դուրս ելան բեռնաւորուած ջորիներ, որոնք կատուի նման անցնում էին այդ նեղ շաւիղից. մի ջորուց բաց ընկած ճիւղը, որ կպչում էր երկրորդին կարծես ճանճ լինէր նորա համար. միեւնոյն ազդեցութիւնն էր անում եւ երիտասարդ փայտակարանցուն, որ ջորիների յետեւն ընկած ահագին փափախը սկանջին դրած „Քորոզլի“ եղանակաւ թնդացնում էր անտառը, մինչ անտանելի նեղութեամբ ջորիներից անցնելով հանդիպեցինք երիտասարդին, որ դարաղաղցու սովորութեամբ բարձր բարի օրն ասելով անցաւ մեզնից: Երկու ժամաչափ

յարմար է դատում կալուածների վարչութիւնը յանձնել մի բոլորովին առանձին և անշահախնդիր հաստատութեան, և մի կոնդակով յանձնում է այդ ծանր և ձանձրալից պաշտօնը Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան վարչութեան պատուիրելով նորան կալուածները շահացնել, բայց հասոյթներին ձեռք չը տալ, և կազմել առանձին գումար յօգուտ նոյն եկեղեցու:

Անմիջապէս որ նոյն ընկերութեան գործադիր ժողովը ձեռնարկում է գործի, ահա ծխականները և նոցա հետ միասին մի քանի սագեր, որոնք պատրաստ են ամեն րոպէ մի սարսափելի աղմուկ հանել, մի այնպիսի գոռում գոչում են բարձրացնում, որ Ուսումնասիրաց ընկերութիւնը աւելի յարմար է դատում ձեռք վեր առնել այդ բանից, մանաւանդ երբ որ տեսնում է որ թաղեցիներից կազմւում է մի քանի հոգուց մի յանձնաժողով այդ կալուածները կառավարելու համար, և ուրախանում է որ վերջապէս այդ կալուածների համար հոգացող է լինելու,

Տխուր յուսախաբութիւն. այդ յանձնաժողովը որ միայն արգելք լինելու համար էր կազմուած, որ մերժում էր թեմական առաջնորդի իրաւասութիւնը եկեղեցապատկան կալուածների խնդրում, որ ոտնձգութիւն էր համարում Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան յանձն առած նեղութիւնը, այդ յանձնաժողովը հէնց ծնուած օրը մեռնում է:

Այսօր այդ կալուածները կամ փլատակներ են դարձել կամ բառի բուն նշանակութեամբ աղբանոցներ, այնպէս որ դրացիները ամեն օր գանգատւում են այդ կալուածներից բուրող գարշահոտութիւններից, և հայհոյելով հայհոյում են մի ազգի որ այդպիսի կալուածներ է պահում: Արդէն այսօր նոքա չարժեն իւրեանց մի քանի տարի առաջուայ արժէքի կէսը, և մի քանի տարուց յետոյ եկեղեցին կարող է ձեռքերը լուանալ այդ կալուածներից:

Ահա այսպէս են գործում ամեն բանի արգելք հանդիսացող այն տխուր գործիչները, որոնք ամէն մի խնդրի մէջ ցոյց են տալիս իւրեանց քաջագործութիւնը:

Մթթէ ծխականները չեն կարող մի շնորհքով յանձնաժողով կազմել և գոնէ թաղը ազատել այդ գարշահոտութիւնից, և հայերին անպատուութիւնից:

Հրաւիրում ենք կրկին սրբազան առաջնորդի ուշադրութիւնը այս խնդրի վերայ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դավրէժ 21 յուլիսի 1894

„Շաւիղի“ № 25 բանասիրականի մէջ մի պարոն անտեղի ակնարկներ է արել Լիլաւայի դպրոցների և հոգաբարձուների վերայ: Պարոնը ասում է պ. պ. Փանուէլեանցը և Գուլմասեանցը, 89 թուին հոգաբարձուներ ընտրուեցան, իսկ 90 թուականին կամաւոր կերպով թողեցին իրանց պաշտօնը: Պարոնի գրածն ճշմարիտ է, միայն պէտք է հարցնել թէ երբոր հոգաբարձուները իրանց յօժարութեամբն թողեցին իրանց պաշտօնը, ուրեմն էլ ինչից էին ստիպուած այսօր պրօսլադանդիստներով, փեսաներով ճիգ թափել նորից հոգաբարձուներ վերընտրուելու, քաւորներով և խարդախութիւններով հոգաբարձութիւն ցանկացող մարդը առաջօրէն գոնէ նախապատրաստուած կը լինէր: Պարոն Փանուէլեանց և պ. Գուլմասեանցը երբէք այդ ցանկութիւնը չեն ունեցել. պ. Փանուէլեանցը ժողովի մէջ անգամ չը կար. իսկ պ. Գուլմասեանցը Մարաղուց շաբաթ օրը քաղաք է հասնում և կիրակի առաւօտ եկեղեցի գնալով, պատահում է ժողովին. մի մեծ ապացոյց որ այդ ցանկութիւնը ժողովուրդը ունեցաւ. մթթէ կարելի է ժողովրդի ձայնը խեղդել:

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Կ. Վեհափառութեան Նստրէդդին Շահնշահի 65-երրորդ տարեդարձի առթիւ, ամսոյս 26-ի գիշերը տեղի ունեցած լուսավառութիւնը և հրախաղութիւնը արտակարգ մի շքեղութիւն ունէր: Հպատակ ժողովուրդն ոգևորութիւնը և ուրախութիւնը, անչափ էր: Ամեն խանութները և յայտնի հրապարակները լուսաւորուած էին, ամեն մի անկիւնում նուագում էր գինուորական երաժշտութիւնը. արուած լուսավառութեան մէջ առաջին տեղն էր բռնում կայսերական բանքը որոյ ամբողջ հոյակապ շէնքը լուսաւորուած էր կազով, յետոյ փոստատունը և վերջը եղբարք Թումանեանց առևտրական տունը:

Ն. Զուղայից եկած մասնաւոր մի նամակից քաղում ենք հետևեալը: Անցեալ շաբաթ Ն. Կ. Վ. Շահնշահի եղբայր Ն. Կ. Մեծ. Ֆիօքն-ըդ-Դովլէն, բարեհաճել է գալ Ամենափրկչեան վանքը ի փոխ այցելութիւն սրբազան Եպիսկոպոսի: Մի աշակերտ կարդաց մի պարսկերէն ճառ, տղայոց դպրոցի երգեցիկխումբը դիմաւորեց նրան մի հայերէն երգով և առաջնորդեց մինչև եկեղեցուդուռը և ապա եկեղեցու դռնից դպիրներն „գովեա երուսաղէմ“ շարականով առաջնորդեցին Ն. Կ. Մեծութեանը մինչև սեղանի առաջ: Սրբազանը եկեղեցում մի քանի խօսքով, որը թարգմանեց պարսկերէնի տէր Իսահակ քահանան. շնորհաւորեց Կայսերական հիւրի երկրորդ անգամ գալուստը ի վանք և ապա շնորհակալութիւն յայտնեց Շահնշահից և. արքա-

---

այդ անտանելի ճանապարհով գնալուց յետ դուրս եկանք ղշլաղլուց արտերը, որոնք ընկած էին մի տափարակ տեղ, կէս ժամ էլ արտերով գնալուց յետ հասանք Ղշլաղը:

Ղշլաղը ընկած է մի տափարակ տեղ որի չորս կողմերը առաջիններն պէս անտառապատ չէ, այլ մի քանի տեղերը շրջապատուած են Թուփերով ու մացառներով:

Ունի 30 տուն, որոնք պարապւում են երկրագործութեամբ. ունին մի եկեղեցի 2 քահանայով, որոնք իրանց յաճախ պատահած կռիւների պատճառաւ, ծուխերը բաժանած են իրարից. եկեղեցին շատ անշուք է. այստեղ 4 տարի առաջ բացուել էր մի վարժարան, որտեղ մանուկները ուսանում էին Սաղմոս ու Ժամագիրք. բայց այդ էլ շուտով փակուեց:

Ղշլաղ մի քանի տարի առաջ ունէր մօտ 50 տուն, բայց վերջերս Թուրք խաների նեղութեան պատճառաւ դուրս եկան եւ ցրուեցան մօտակայ գիւղերը. ոմանք էլ Դավրէժ փոխադրուեցան: Այս գիւղի մէջ տեսայ եւ մի քանի պարտէզներ, որոց մէջը կային կեռասենի, Թթենի եւ մի քանի այլ տեսակ պտղատու ծառեր:

Ղշլաղից տխուր տպաւորութեան տակ ճանապարհ ընկայ դէպի Սարդու, ճանապարհին տեսնելով մի քանի Թուրք գիւղեր, որոնք ունէին բաւական խաղողի այգիներ:

Ղարադաղի հայերը բնակւում են բարձր եւ ցուրտ տեղերը, որտեղ բացի երկրագործութեամբ ուրիշ բանով չեն կարող պարապուիլ, իսկ որքան տաք տեղեր կան նոյնպէս եւ ջրառատ, այն տեղերը Թուրքերն են բռնած:

Մենք լանջերով ընկած ճանապարհով շարունակում էինք մեր ընթացքը. Թէպէտ եւ կային փոքրիկ ծորակներ, բայց չունէին այն նեղութիւնները, որ տեսանք առաջ. 4 ժամ գնալուց յետ՝ հասանք Սարդու:

Սարդու գիւղը ընկած է լեռան արեւելեան բարբարոտ լանջի վերայ, այսպիսի մի տեղ, որ մարդը ազատ քայլել չէ կարող, բայց գիւղացիք առ հասարակ վարժուած լինելով այդպիսի ճանապարհների, անվախ կերպով անց ու դարձ են անում. գիւղի հարաւային կողմում կայ մի ծորակ որի միջից դուրս է գալիս մի սառն աղբիւր, որով գիւղացիք ջրում են իրանց բուրաստանները. Սարդուն բաղկացած է 40 տնից. ունի մի քարաշէն եկեղեցի, շատ հնոց եւ շատ ամուր կերպով շինուած. բայց զուրկ է եկեղեցական սպասներից. ունի քահանայ տէր Միքայէլ անուամբ. մենք ասացինք արդէն որ Ղարադաղի քահանաները միայն եկեղեցական աբարողութիւնը գիտեն, բայց դժբաղդաբար տէր Միքայէլը այդ էլ չը գիտէր:

Գիւղացիք երկրագործ են, բայց այս գիւղում վարուցանքը լաւ չը բուսնելու պատճառով. հրիտասարդութեան մեծ մասը գնում են օտար երկիրներ (գլխաւորապէս Թիֆլիս եւ Բաղու) եւ մշակութիւն անելով՝ իրանց տարուայ աշխատանքը յետ են ուղարկում, իսկ իրանք հետու հայրենիքից, պանդուխտ, օտար երկրում հալւում մաշւում են ծանր բեռան տակ:

յորդի Զէլէ-Սուլթանից իրանց բարձր հոգածութեան և շնորհաց համար որ ունին դէպի իրանց հպատակ հայ ժողովուրդը։ Ապա բարեմաղթեց երկար և անդորր կեանք թագաւորին, թագաժառանգին, արքայորդի Զէլէ-Սուլթանին և ներկայ եղող կայսերական հիւրին։ Ապա նոյն հանդիսով առաջնորդեցին նրան տաճարանը։ Կայսերական հիւրը այնտեղ մնաց 45 րոպէ, և որքազանի հետ քահանայ թարգմանի միջոցով միայնակ խօսակցեց, ժողովուրդը միւս դահլիճում սպասում էր։ Մեկնման ժամանակ Նորին Մեծութիւնը ընծայեց սրբազանին մի զմրուխտ մատանի։

—

Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան նախաձեռնութեամբ, ի նպաստ Սովելոց հանգանակուած գումարից, 200 ռուբլի ուղարկուեցաւ „Մշակի“ խմբագրութեան որ հասցնէ Վեհափառ Հայրիկին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ԿՈՎԿԱՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

—

—„Մշակից“ քաղում ենք հետևեալ լուրը։ Արտաքին գործերի մինիստրութիւնը, „Прав. Вѣст.“ լրագրի խօսքերով, ռուսաց դիպլոմատիական ներկայացուցչի միջոցով Թէհրանում, բանակցութիւններ սկսեց պարսկական կառավարութեան հետ, որպէս զի սան իտարական վերահսկողութիւն նշանակուի արևելքից եկող առևտրական քարաւանների վերայ՝ դրանց ճանապարհի գլխաւոր կենտրոններում, այն է Բէնդէր-Աբասում, Մէշհեդում և Սէրզէվարում։ Ներկայումս պարսից կառավարութիւնը, որպէս հաղորդում է ռուսաց դեսպանը Թէհրանում յունիսի 16-ից, կարգադրութիւններ է արել խիստ միջոցներ ձեռք առնելու, որպէս զի ժանտախտը չը տարածուի Պարսկաստան՝ Չինաստանից և Հնդկաստանից։

—Անցեալ անգամ մենք տպագրեցինք Բաթումի մեր թղթակցի նամակը „Վլադիմիր“ նաւի խորտակման մասին, այժմ քաղում ենք „Մշակ“ լրագրից հետևեալ մանրամասնութիւնը։ „Վլադիմիր“ շոգենաւի խորտակման պատճառով, Սև ծովին զոհ գնաց հարուստ Գրիգոր Թումայեվ։ Բագուից մեզ գրում են, որ դա ոչ թէ յորենավաճառ Թումայեվն է, այլ յայտնի նաւթարդիւնաբերող և շոգենաւատեր Գրիգոր Թումայեվ, շուշեցի, որ նորերս ընտրուածէր Մարգասիրական ընկերութեան խորհրդի նախագահ։ Հանգուցեալը իւր կնոջ և երեխաների հետ Վիէննա էր գնում բժշկուելու։ Խորտակման ժամանակ, որպէս հաղորդում են, ինքը, կինը և երկու երեխան խեղդվել են, ազատուածներ են մի աղջիկ և մի տղան։ Ասում են, որ նորա մարմինը կը փոխադրուի Բագու։ Թիֆլիսում տեղեկութիւն է ստացուած, որ Եւպատորիայի մօտ գտնուել են երկու կանանց դիակներ, որոնցից մէկը տիկին Աննա Կորդանովան է, որ միասին հաղորդեցի նք։ Յէնզոր Շուլց, որը նոյնպէս գնում էր „Վլադիմիր“ շոգենաւով և որի մասին ոչինչ տեղեկութիւն չը կար, ենթադրում են, որ Բաթումից Օդեսա գնալիս՝ ճանապարհին ափ է իջել։ Նոյն բանը յայտնի է Աբբենին և Ֆորկատաի արտիստների մասին։ Իսկ „Тифл. Листокъ“ լրագիրը իր երէկուայ համարում տպել է Օդեսայից ստացած հետևեալ կարճ հեռագիրը. „Ազատուած են 91 ճանապարհորդներ և 39 հոգի շոգենաւի ծառայողներ. խեղդուեցին 55 անձինք. մինչև երէկուայ օրը ափ են դուրս գցուած տասը դիակներ։ Խորտակուող շոգենաւին օգնութիւն էր հասցնում իտալական „Կոլումբիա“ շոգենաւը և պատահմամբ անցնող ապրանքատար „Սինէուս“ շոգենաւը։ Կատարելապէս արժանահաւատ մոսնաւոր տեղեկութիւնների համեմատ, Օդեսայից գնացած ջրասոյզները շարունակում են աշխատել, բայց համարեա առանց հետևանքի, որովհետև մինչև այժմ նրանք չեն կարողանում մտնել նաւախուցերը։“

—Երէկ, յուլիսի 1-ին, հետևեալ պաշտօնական հեռագիրն է ստացուել „Վլադիմիր“ շոգենաւի խորտակման մասին։ “Վլադիմիր„ շոգենաւը լունիսի 27-ին, գիշերուայ 1 ժամին, անցնելով 35 մղոն Տարխանկուտից դէպի Օդեսա՝ ընդհարուեց իտալական “Կոլումբիա“ շոգենաւի հետ։ „Վլադիմիր“ շոգենաւի վերայ կային 142 ճանապարհորդներ և 52 նաւաստիներ։ Մօտ եկող Սինէուս և Կոլումբիա շոգենաւերը ազատեցին և Օդեսա հասցրին 91 ճանապարհորդներ և 39 նաւաստի ներ։ Խեղդուողների թիւը 55 են հաշուում, որոնցից 9 դիակներ բերուած են Օդեսա, որոնց թւում և կոմսուհի Բալմէն, Շէստակով։ Պօսաը և դրամական ծրարները կորան։

—Կ. Պոլսի երկրաշարժի մասին Նորդար լրագրից քաղում ենք հետևեալ մանրամասնութիւնները։ Յունիս 28-ին, ճիշդ կէս օրին, զգացուեց երկրաշարժի զօրեղ ցնցումը հարաւ-արևմուտքից, հիւսիս-արևելք ուղղութեամբ, որին իսկոյն յաջորդեցին և երկրորդ ու երրորդ ցնցումներն աւելի ահեղ կերպով, որ տեւեց մօտ 8—10 վայրկեան։ Ժողովուրդը սարսափած դուրս թափուեց, փոթորկի բերուած ոչխարների նման վազում էին՝ ուր, իրանք էլ չը գիտէին. նրանց դէմքն արտայայտում էր ոչ միայն սարսափ, այլ և ցնորք ու սպշութիւն։ Ժողովուրդը պատրաստ չէր. հէնց առաջին ցնցումն այնքան մեծ էր որ ապահով ենք թէ ամենքն էլ այդ վարկեանին այնպէս էին հաւատացած՝ թէ՝ եթէ ոչ աշխարհիս, գոնէ

Այսպէս են եւ Ղարագաղի միւս գիւղացիները։ Սարդուն էլ ղշլաղցոց պէս տարիներից առաջ ունեցել է մի վարժարան առաջինի ձեւով, բայց այժմ սա էլ փակ է։

Կիրակի օր էր։ Լսուեց կոչնակի ձայնը առաւօտեան շատ շուտ. կրօնասէր ժողովուրդը շուտ շուտ եկեղեցի էր վազում, 100 տարիկան ծերերը եւ պառաւները մէջքները կռացրած. փայտի վերայ յենուելով կամաց կամաց դիմում էին եկեղեցի։ Եկեղեցին գիւղից փոքր ինչ վերեւ կանգնած է լեռան բարբարոտ լանջի վերայ։ Տեսնելով բարեպաշտ ժողովրդի եռանդը, ես եւս գնացի եկեղեցի, նստապարեին յանախ ընկնելով քարերի վերայ եւ խրրատ փայտակարանցու ծիծաղի առարկայ դառնալով։

Պաշտամունքը վերջացաւ, ժողովուրդը վերջին ծունրը դնելով դուրս եկաւ եկեղեցու դռան առաջ կայ մի փոքրիկ տափարակ. ծերերը այստեղ նստան քարերի վերայ, երիտասարդները ոտքի վերայ։ Կանգնած սպասում էին տէրտէրին։ Ամենից վերջը դուրս եկաւ եւ տէր հայրը եւ սովորական հոգւոյը կարդալուց յետո նստեց իւրեան յատկացեալ քարի վերայ, որ ամենից բարձր տեղն է բռնում։

Առաջին անգամ Մելիք-Խաչատուրը սկսեց խօսել եւ զանազան գործերի համար խորհուրդներ տալ երիտասարդներին։ Մելիքի խօսքին փոխանակ մէկի մի քանիսին էին պատասխանում, որոց խաղն ի խուռն աղմուկը արձագանք էր տալիս մօտակայ ձորերի եւ ժայռերի մէջ։

Շատ երկար խօսելուց յետոյ, գիւղացիք խօսքը գործին ուսման վերայ եւ միմեանցից հարց ու փորձ էին անում թէ ինչ միջոցներով կարող են մի վարժարան բացանել։ Այդ միջոցին Մելիքը դարձաւ դիպի ինձ ասելով, „դուք եւս մի խորհուրդ տուեցէք մեզ այս մասին գուցէ հնարաւոր լինի։“

Մելիքին լսելով՝ ես մի եւ նոյն խորհուրդը տուեցի, ինչ որ տուել էի ուրկիւթինցոց եւ ղշլաղցոց, թէ առաւել լաւ կը լինէր եթէ այդ չորս գիւղերը միանային եւ միացած ուժով պ. Սարգսեանցի հետ գործէին, ու այդպիսով չորս գիւղերի մէկում կարելի կը լինէր վարժարան բաց անել։

Գիւղացւոց մեծամասնութիւնը, որոց հետ եւ Մելիքը, ասածիս հաւանութիւն տուին, եւ այդպիսով վերջացաւ այդ նահապետական ժողով։

Մեր տեսած չորս գիւղերն էլ գտնուում են Քուրք խանների իշխանութեան տակ. կալուածներն էլ պատկանում են նոյն խաներին։

Տակաւին արշալոյսը նոր էր բացուած, որ ես Սարդուից դուրս ելայ. իջնելով լեռան քարքարոտ լանջի վերայով, 1 ժամից յետոյ հասայ խոր անդունդը, որի միջով հոսում էր Մարդանաղում գետը եւ որի մօտն է համանուն գիւղը։ Մարդանաղումը նշանաւոր է իւր պտղաբերութեամբն եւ այգիներովը, որ վայելում են Քուրքերը։ Մարդանաղումից լեռն ի վեր բարձրանալով, անպատմելի դժուարութեամբ 4 ժամում հասանք Խանագահ։

(Կը շարունակուի)

Բ. Տ. Ս.

Կ. Պոլսի վերջն է, և փախչում էին. իսկ վերևից թափւում էին քարեր, փայտեր, կղմինդր, փլչում էին տներ. վերջապէս հէնց ինձ այնպէս էր թւում թէ աշխարհը ձուի չոր կեղևի նման ճարճատելով փշրւում է ինչ որ տնեղ ձուքնրի մէջ։ Բնութեան արհաւիրալից այս խառնաշփոթութեան ժամանակ՝ հպարտ, գոռոզ մարդիութիւնը կարծես վայրկենապէս խոստովանելով իւր անսահման տգիտութիւնը, ոչնչութիւնը, լեզուակապ լռել էր. գործում էին մոլար քայլերը միայն, Անցնելով այդ վայրկեանը, ժողովուրդը վայնասուն սկսեց. ես անզօր եմ նկարագրելու այդ վայնասունը։ Զօրեղ երևակայութեան տէր մարդը միայն կարող է այդպիսի մի խառնաշփոթութիւն պատկերացնել իրեն։ Առաջին երեք ցնցումներից 5—6 բոպէ յետոյ զգացուեց չորրորդ ցնցումը, բայց շատ թոյլ. նոյնքան թոյլ ցնցումներ պատահեցան երեկոյեան 4 ժ. 5 ր. երկու անգամ. 6 ժ. մէկ անգամ, 11 ու կէս ժ. չորեքշաբթի՝ 24 յունիսի առաւօտեան ժամը մօտ 1-ին, 2-ին և 6-ին մօտ մի մի ցնցումներ, որոնք դնալով նուազացան, թէև միշտ պատահեցան։ Առաջին զօրեղ ցնցումների պատճառով ամբողջ Պոլիսը դատարկուած, ապաստանել էր քաղաքի շէնքերից հեռու բաց տեղերում և հանրային պարտէզներում. երեքշաբթի և լոյս չորեքշաբթի լոյս հինգշաբթի, այսինքն 28 ի և 29-ի գիշերները քաղաքի և ոչ մի տանից ճրագի լոյս չէր երևում. որովհետև, ինչպէս առաջ գրեցինք, ժողովուրդը աւելի մեծ աղէտի էր սպասում։ Բայց երբ մինչև ամսոյս 3-ը ոչինչ չը պատահեց թեթ. օրօրումներից զատ, ժողովուրդը քիչ սրատանդեց. շատերը տներն էին քաշուել. միւսներն էլ մտածում էին քաշուել, քաղաքը վերակսուեց իւր նախկին կեանքն ու գործունէութիւնը, բայց, ահա յունիս 30-ին, երեկոյեան ժամ 4-էն անց մի քանի բոպէ, 28-ի առաջին ցնցման չափ զօրաւոր ցնցում պատահեց, որով կրկին ժողովուրդը ոարսափահար դուրս թափուեց և մինչև երեկոյ կրկին մարդ չը մնաց տներում. թէև ցնցումն էլ նոյնքան զօրաւոր էր. բայց ակնթարթային, որով հաղիւ թէ վնաս պատճառած լինի։ Երեկոյեան ժամը մօտ 6-ին զգացուեց առաջինից աւելի թեթև ցնցում, իսկ յուլիսի 1-ին, առաւօտեան ժամը մօտ 4-ին, գետինը օրօրուեց. դրանից յետոյ մինչև այս վայրկեանս (յուլիս 2 առաւօտեան ժամ 10-ը) որևէ ցնցում չէ պատահել թէև ժողովուրդն այլևս չէ վստահանում տուն վերադառնալ։ Առևտուրը ւկսում է թոյլ կերպով, ոչ ոք սրտով գործի չէ կպչում։

Մեր այս թղթակցութիւնը գրում ենք բացօթեայ ապաստանարանից։

Երկրաշարժի պատճառած վնասը։ Ամենից շատ վնասուողը Սմիրնոյն է. Գեդիկ-Փաշան, Սամաթիանան, Գումգարու, Մաքր-գիւղ, Սանտանֆանս և կղզիները։ Տներից խանութներից, մզկիթ ու եկեղեցիներից շատերը փլած են իսկ մնացածն էլ խարխլած. եթէ տեսլու լինինք 10 հազիւ ընակելի է, ջափագանցութիւն չի լինիլ։ Այն երկրաշարժի նիւթական վնասը՝ իրաւ շատ մեծ եւ Կարողութեան մեծ մասը փլատակների տակ թաղուելուց և յափշտակութիւններից ենթարկուելուց յետոյ. գէթ յոյսի չէ թէ երբ գործերը պէտք է վերսկսուին. այսօր ուտելիքից զատ ոչ մի շահաբերական պարապմունք չէ վերսկսուած, իսկ շուկան, որ մեծ մասամբ փլած է, հազիւ թէ մի քանի ամսից լնայ բացուի։

Պոլսի ասիական եզերքն այնքան վնաս չէ կրել. պատմում են, որ ցնցումն այնտեղ աւելի թեթև է եղել։ Զը նայելով որ Ղալաթիայում ցնցումն նոյնքան զօրաւոր էր, բայց հազիւ 10—15 տուն փլաւ, թէև շատերը ճեղքճեղքուեցան. իսկ Ղալաթիայից այն կողմ մինչև Բէյուկ Տէրա, մինչև Շեյլի, Ֆէրժ Ղասքէոյ իւր մէջն ունենալով, Պերան, Թոպքսեմը, Զանփալան և այլն համեմատաբար աւելի ևս քիչ վնաս են կրել։

Ընդհանուր աղէտի մասին դեռ պաշտօնապէս ոչինչ չը կայ և այսպէս շուտ լինել էլ կարող չէր, որովհետև դեռ նորանոր յայտնութիւններ են լինում. թերթերն էլ միշտ չափաւոր լեզուով են գրում. այնպէս որ մարդկանց կորուստը՝ թերթերին հաւատալով՝ ամբողջ Պոլսի մէջ հազիւ մի հարիւր հոգու հասնի, բայց մենք կասենք, որ եթէ 1000-ից աւելի չէ, պակաս լինել էլ կարող չէ և այդ հազար թիւն էլ քիչ է ընդհանուր կործանումին նայելով։

Ղալաթիայ նոր շինելիք նաւամատոյցին (Duais) նայելով՝ պէտք է ասել որ եթէ ոչ ամբողջ Պոլիսը, գոնէ ամբողջ Ղալաթիան մօտ 7—10 սանտիմետր ցած իջաւ։ Նաւամատոյցի շինուած մասի լեցքը նստեց մօտ 25 սանտիմետր. իսկ ցեմենտով գրուած բլոկները մօտ 15 սանտիմետր, այ նստելու ոչ մի պատճառ չունէր։ Բայի այդ, ցնցումից կոյուզինները լցուած լինելով, երբ նաւամատոյցի ընկերութիւնը բաց արեց Ղալաթիայ և հին կոյս գիները, երևաց որ ջուրը 7—10 սանտիմետր բարձր է, որ ասել է երկիրն այդքան ցած է իջել։

Լաւ չենք յիշում երբ և որտեղ հարց էր բարձրացել այն մասին թէ տները ինչ գիրքով շինել, որ երկրաշարժի վտանգից դերծ մնան։ Իրաւ՝ դժուար է երկրաշարժի ընթացքը որոշել, որովհետև նա այսօր այս, միւս անգամ մի ուրիշ ուղղութեամբ կարող է ընթանալ, բայց եթէ այդպէս չէ պատահէր. եթէ իւրաքանչիւր երկրի երկրաշարժ մի որոշ ուղղութիւն ունենար և այդ ուղղութիւնը ճշգուէր. այն ժամանակ աւելի լաւ՝ ար էր փողոցները հէնց այդ ուղղութեամբ բացուէին և տները շինուէին միմեանց կից և մի բարձրութեամբ։ Իթէ Ղալաթիան, Պերան և միւսները գերծ մնացին փլուզմից և այնքան վնաս չը կրեցին, այդ նրա համար էր. որ փողոցներից մեծ մասը հարաւ արևմուտքից հիւսիս-արևելք ուղղութեամբ են ընկած և տները միմեանց կպած են։ Տների ընդհանուր մակերևոյթից վեր գտնուող լարկերից մեծ մասը ձեղքուեցաւ։

Երկրաշարժի մասին դեռ կը շարունակենք գրել։

ՇԱՒԻՂԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Սալթանապատ.—Մ. տասցանք մեր տարեկան բաժանորդագրութիւնը, որովհետև տասջին թուերը ապատուած են և դուք ստանալու էք այս տարուայ հոկտեմբերից մինչև յունիսի թիւերը. ուստի յայտնեցէք թէ ինչ ենք ստանալու մեր կրկան փոխն մնացած 4 գրանը

Մարտպա.—Օրոր. ուղարկեցէք ձեզ նկարագրութիւնը։ Մեր գործակալն պատուէրն համառօտ լրագիրները ուղարկում ենք

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷՊՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒՄԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՐԵՒԵԼԵԱՆ ՁՐՈՅՑՆԵՐԻ

Առաջին հատորի

Թարգմանութիւն պարսկերէնից

Մրբալ Ա. Մարգարեանի

Գիրքը բաղկացած է հինգ հատորից. Ա. հատորի գինն է 30 շահի կամ 40 կոպէկ։ Դիմել՝ Թէհրան Արսէն Մ. Մարգարեանին։

Ամեն տեսակ եւրոպական ճարեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼԻ դեղատունումը Լաղեզար փողոցում Թեհրանում. տասնրումանուչապի եւ աւելի գնողի համար, սովորական արժէքից զիջում կը լինի։ Գիշեր ժամանակում եւս դեղատունը բաց է։